ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Դասավանդման առանձնահատկություններով պայմանավորված՝ աշակերտների առաջադիմության և դրդապատճառների ձևավորման հիմնահարցը

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

Կազմեց՝ Էլենա Հակոբյան (Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...3

Գլուխ 1. Դասավանդման առանձնահատկությունները և դասապրոցեսի ընթացքում կիրառվող մեթոդները,հնարները դրանց ազդեցությունը կրթության որակի վրա…….…….…5

Գլուխ 2. Աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները և միջավայրի ազդեցությունը կրթության որակի վրա…….....9

Հետազոտության տվյալների վերլուծություն……...14

Օգտագործված գրականության ցանկ……..…..16

Հավելված 1……17
Հավելված 2……..20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: Ժամանակակից տեղեկատվական հոսքերի պայմաններում դպրոցական տարիքի երեխաները, և հատկապես դեռահասները, ունենում են կողմնորոշման, ուշադրության բաշխման հետաքրքրությունների կենտրոնացման խնդիր: Այս իրավիճակն իր հերթին տանում է նրան, որ աշակերտների մոտ ձևավորվում է համատարած անորոշություն, որտեղ դպրոցական տարիքի երեխան՝ ելնելով իր տարիքային-հոգեբանական առանձնահատկություններից, չի կարողանում հավասարաչափ բաշխել իր ուշադրությունն ու հետաքրքրությունները և սրանից էլ գալիս է անտարբերություն <<անհրապույր և անհետաքրքիր>> ուսումնական նյութի նկատմամբ:

Այսպիսով՝ ահա այս պայմաններում էլ տուժում է սովորողի առաջադիմությունը, հետևապես նաև կրթության որակը:

Այս հանգամանքով էլ պայմանավորված է սույն թեմայի ուսումնասիրության հրատապությունը:

Հիմնախնդիր: Ուսման նկատմամբ ստեղծված անտարբերությամբ պայմանավորված՝ ձևավորվում է մի իրավիճակ, որի պայմաններում դիտվում է սովորողների հետաքրքրությունների և դրդապատճառների բացակայություն, ինչն էլ իր հերթին հանգեցնում է առաջադիմության և կրթության որակի անկման:

Ահա այստեղից էլ հարց է առաջանում.

Ինչպե՞ս վարվել նման պայմաններում, որպեսզի այս իրավիճակը հաղթահարվի:

Հիպոթեզ: Եթե ուսումնասիրենք դասավանդման այն առանձնահատկությունները,մեթոդները,հնարները, որոնցով պայմանավորված կարող են փոփոխվել սովորողների դրդապատճառները և առաջադիմությունը, ապա հնարավոր կլինի դուրս բերել դրդապատճառների և առաջադիմության դրական տեղաշարժը ապահովող գործոնները:

Թեմայի հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցն է:

Թեմայի հետազոտության առարկան դասավանդման առանձնահատկությունները, կիրառվող հնարներն ու մեթոդներն են, որոնք նպաստում են աշակերտների առաջադիմության և դրդապատճառների զարգացմանը:

Հետազոտության նպատակը: Թեմայի հետազոտության նպատակն է ուսումնասիրել դասավանդման առանձնահատկությունները, հնարները և մեթոդները, որոնցով պայմանավորված է աշակերտների առաջադիմությունը և դրդապատճառները:

Թեմայի ուսումնասիրության խնդիրներն են.

1.Ուսումնասիրել գրականության դասաժամին դասավանդման առանձնահատկությունները, կիրառվող մեթոդները և հնարները, դրանց ազդեցությունը կրթության որակի վրա:

2.Ուսումնասիրել աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունների ազդեցությունը կրթության որակի վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Որպես հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսանում Ռոջերսի և Մասլոուի <<ես>>-ի մասին դիտարկումները, որտեղ մասնավորապես նշվում է, որ փախուստը սեփական անհատականությունից և՛ Ռոջերսը, և՛ Մասլոուն համարում էին անձի կարևորագույն պահանջմունքներից մեկը, <<ես>>-ը անկայուն է և մշտապես փոփոխվում է:

Հետազոտության մեթոդաբանական հիմք է հանդիսացել նաև այն փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների, սոցիոլոգների գաղափարները, որոնք մշակել են կրթության զարգացման հիմնախնդիրը՝ Լ.Ս.Վիգոտսկի, Բ.Ս.Գերշունսկի, Վ.Վ. Դավիդով, Տ.Ֆ. Կուզնեցով, Կ.Դ. Ուշինսկի և այլք:

Հետազոտության տվյալների հավաքագրման համար կիրառել ենք հետևյալ մեթոդները. գրականության դասաժամերի դիտարկումներ, աշակերտների հարցում, տարբեր հնարների և մեթոդների կիրառմամբ դասավանդում:

Գլուխ 1. Դասավանդման առանձնահատկությունները և դասապրոցեսի ընթացքում կիրառվող մեթոդները, հնարները, դրանց ազդեցությունը կրթության որակի վրա

Դասավանդման կարևորագույն նպատակն է ապահովել համակողմանի զարգացած անձ դաստիարակելու գործընթացը:

Ժամանակակից աշխարհում փոփոխությունները, զարգացումները տեղի են ունենում շատ արագ և դրան զուգահեռ անհրաժեշտ է , որ նույն տեմպով զարգանա նաև կրթական համակարգը: Այդ արագ զարգացումները ենթադրում են բարեփոխումներ կրթական համակարգում՝ նոր մեթոդաբանական, հայեցակարգային մոտեցումների, նորարարական տեխնոլոգիաների ներդրում, կրթության հիմնահարցերի վերանայում:

Ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն եզրակացության, որ կրթության ոլորտում խիստ անհրաժեշտ են նորարական մեթոդները, հնարները, քանի որ դրանք են խթանում սովորողի ընկալունակության բարձրացման գործընթացին և մոտիվացնում աշակերտին ակտիվ մասնակցություն ունենալ դասապրոցեսին: Այսինքն՝ դասավանդողը պետք է լինի նորարար, անընդհատ զարգացնի իր հմտությունները, կիրառի առավել արդյունավետ մեթոդներ: Ուսուցիչը, եթե նորարարությունը կիրառելիս չի նկատում արդյունք, ապա դա նշանակում է, որ անհրաժեշտ է կատարել փոփոխություն, որը կլինի առավել արդյունավետ:

Յուրաքանչյուր աշխատանք կատարելիս ունենք նպատակ, դասավանդումն էլ ունի նպատակ, որպեսզի դաստիարակի զարգացած քաղաքացի, տա որակյալ կրթություն, ապահովի որակի բարձր մակարդակը:

Որակի բարձր մակարդակ ապահովելու նպատակով էլ հաճախ ուսուցիչները օգտագործում են տարատեսակ հնարներ և մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռում գրավելու աշակերտի ուշադրությունը:

Փորձենք ներկայացնել մի քանի հնարներ, որոնք նպատակահարմար են կիրառել գրականության դասաժամերի տարբեր փուլերում.

Խթանման փուլ

- ✓ **Գուշակություն-** Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:
- ✓ **Զարմանք, անսպասելիություն**- Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:
- ✓ **Մեջբերումներ**- Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:
- ✓ **Մտագրոհ, պրիզմա** և այլն:

Իմաստի ընկալման փուլ

- ✓ **Կենտրոններով աշխատանք**- Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:
- ✓ **T**-աձև աղյուսակ
- ✓ Գաղափարների քարտեզագրում

- ✓ Բանավեճ
- ✓ Վենի դիագրամ
- ✓ Շրջագայություն պատկերասրահում և այլն:

Կշռադատման փուլ

- ✓ Քառաբաժան
- ✓ Երեք բանալի, մեկ կողպեք և այլն:

Հաշվի առնելով այն փաստը, որ այսօր դպրոցը վարում է աշակերտակենտրոն ուսուցում, ապա պետք է հնարավորություն տալ սովորողներին լիարժեք արտահայտվելու, ինքնուրույն ուսումնասիրելու, մեկնաբանելու նյութը՝ օգտագործելով նորարարական մեթոդներ և, իհարկե, այդ ամենը ուսուցիչը պետք է վերահսկի, ուղղորդի, կատարի լրացումներ:

<<Եթե ազգն ակնկալում է, որ կարելի է լինել տգետ և միևնույն ժամանակ ներկայացնել ազատ քաղաքացիական հասարակություն, ապա այս ակնկալիքն իրականանալու բախտ չունի: Ավտորիտար հասարակությունը նպաստում է առկա իրականության պասիվ ընդունմանը և հարմարվողականությանը՝ կոնֆորմիզմին, ինչը նշանակում է գոյություն ունեցածին հարմարվել, հիմնախնդիրը չնկատել: Հակառակ դրան, ժողովրդավարական հասարակության նպատակն է քաղաքացիական կրթության միջոցով նպաստել այնպիսի քաղաքացիների ձևավորմանը, որոնց մոտ զարգացած են միջավայրի քննադատաբար գնահատման և համամասնակցության կարողությունները, որոնք լավ ծանոթ են ժողովրդավարության հիմնական հասկացություններին և կարող են դրանք գործնականում իրականացնել>>: (Թոմաս Ջեֆերսոն)

Ինչպես նաև պետք է նշել, որ բացի նորարական մեթոդների կիրառումից, անհրաժեշտ է նաև սովորողների նկատմամբ ցուցաբերել ճիշտ վերաբերմունք:

Ժողովրդավարական սկզբունքի կիրառումը կարծես շատ համահունչ է այսօրվա դպրոցին, այն շատ կարևոր է, քանի որ դպրոցական տարիքի երեխան չի անում այն, ինչ ասում ենք, այլ անում է այն, ինչ տեսնում է: Դպրոցական տարիքի երեխան փոփոխվում է շատ արագ՝ պայմանավորված տարիքային առանձնահատկություններով: Եվ ահա այստեղից էլ հասկանում ենք, որ շատ

կարևոր է, որպեսզի ուսուցիչը շահագրգռված լինի պահպանել անձնային որակները, քանի որ աշակերտը դաստիարակվում է նաև դպրոցում,նա այստեղ էլ սովորում է որոշակի նորմեր:

Սովորողների նկատմամբ պետք է ունենալ հարգալից, բարեհամբույր, նրբանկատ վերաբերմունք, հարգել երեխայի իրավունքները, անհատականությունը և արժանապատվությունը, նրա տարբեր լինելու, այլ կարծիք, մշակույթ ունենալու իրավունքը, կարողանալ լսել, հարթել կոնֆլիկտները, լինել արդարամիտ, արժանապատիվ, կարողանալ զերծ մնալ խոսքով կամ գործով վնասելուց:

Ահա այս ամենով էլ ուսուցչի գործունեությունը որոշակի ազդեցություն է թողնում աշակերտի վրա:

Գլուխ 2. Աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները, սոցիալական պայմանների և միջավայրի ազդեցությունը կրթության որակի վրա

Նախորդ գլխում՝ քննարկելով դասավանդողի դերը կրթության որակի գործում, դիտարկեցինք այն տարբեր կողմերից: Այժմ էլ փորձենք ուսումնասիրել աշակերտին, նրա տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները և կատարված հարցումների արդյունքներով էլ հասկանանք,թե ինչքանով է այս ամենը իր ազդեցությունը ունենում կրթության որակի վրա:

Այսօր կրթության ոլորտում արդեն կատարվել են շատ փոփոխություններ և արդյունքում 10-ամյա կրթությունից անցում կատարեցինք 12-ամյա կրթության: Ահա այս փոփոխություններով էլ պայմանավորված փոխվեց համակարգի կառուցվածքը՝ տարրական դպրոց, որը 1-4-րդ դասարաններն են, միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ և ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ:Սա նշանակում է, որ երկարաձգվեց դպրոցական ուսումնառության տարիները, եղան գնահատման համակարգի փոփոխություններ և առանձին ավագ դպրոցների ստեղծում:Փոխվեց նաև դասավանդման մեթոդները, եկան նորերը՝ նոր մեթոդներ, դասագրքեր:

Այժմ դպրոցներում կատարվում է աշակերտակենտրոն ուսուցում ի հակառումն նախկին ուսուցչակենտրոնին, այսինքն՝ ներկայումս գործում է ժողովրդավարությունը, աշակերտը դատապարտված չէ ուսուցչի կողմից <<դասախոսություն>> մեթոդի անընդմեջ կիրառման հետևանքները կրել և կորցնել սեփական մոտիվացիան, այժմ ուսուցիչը ունի ուղղորդողի դեր, այլ ոչ թե պարտադրողի: Բայց հարց է առաջանում.

Բարեփոխումներից հետո ինչո՞ւ է նկատվում կրթության որակի անկում և ո՞րն է դրա պատճառները:

Այս և նմանատիպ այլ հարցերի պատասխանները կտանք՝ ելնելով հետազոտության արդյունքներից: Մինչ այդ ներկայացնենք այն բոլոր դրդապատճառները, որոնք ազդեցություն ունեն կրթության որակի վրա, հատկապես առանձնացնելով աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները, սոցիալական պայմանները:

Սկսելով տարիքային-հոգեբանական առանձնահատկություններից՝ նշենք, որ դպրոցական տարիքի երեխայի <<ես>> -ը դեռևս լիովին զարգացած չէ և ինչպես Ռոջերսի և Մասլոուի <<ես>>-ի մասին դիտարկումներում է նշվում, որ <<ես>>-ը անկայուն է և մշտապես փոփոխվում է: Այս սկզբունքից ելնելով ՝փորձենք դիտարկել դպրոցական տարիքի երեխայի առանձնահատկությունները տարբեր փուլերում: Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ: Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար,գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլն: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

ա/իմացական ոլորտի զարգացում

բ/պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով:

Հաջորդը դեռահասության շրջանն է: Այս շրջանում կարևորագույն բնութագրականն է <<ես>>-ի ձևավորումը և հասունության զգացումի առաջացումը:Ի հայտ են գալիս սեփական կարծիքներ, հայացքներ, արժեքներ և ահա այստեղ էլ պարզ է դառնում, որ աշակերտակենտրոն ուսուցումը ցանկալի է, քանի որ թույլ ենք տալիս աշակերտին արտահայտել սեփական կարծիք, ձևավորվում է դատողական,

վերլուծական ունակություններ, որոնք առավել կարևոր են կրթության համար:

Հոգեբանության մեջ դպրոցական երեխաների այս տարբեր փուլերը համարվում են ճգնաժամային: Համեմատաբար հանգիստ կրտսեր դպրոցական տարիքից հետո երեխան հանդիպում է մեկ նոր անցումային շրջանի, երբ կրկին վերափոխվում են մեծահասկաների հետ փոխհարաբերությունները և փոխվում են զարգացման մի շարք գործոններ: Որպես այս ճգնաժամի կարևոր բնութագրական՝ Ս.Հոլլն առանձնացնում է ինքնագիտակցության ճգնաժամը, որը հաղթահարելով մարդը ձեռք է բերում <<անհատականության զգացում>>: Սա անկայուն շրջան է, երբ դեռահասի մոտ միաժամանակ կարող են ծագել իրար շատ հակասող բազում հույզեր և հոգեվիճակներ, տարաբնույթ ձգտումներ և արժեքներ: Հակադիր և հակասական գծերը, ձգտումները համագոյակցում և հակադրության մեջ են մտնում՝ պայմանավորելով երեխայի բնավորության, վարքի և անձնային անկայունությունը: Այս շրջանում մեծ է ոչ միայն ընտանիքի, ծնողի, այլև դպրոցի և միջավայրի դերը, այսինքն՝ կառավարող սուբյեկտը՝ տնօրենը ապահովելով դպրոցի կոլեկտիվի միասնականությունը, առողջ մթնոլորտը՝ խթանում է դեռահասների այդ շրջանի հաղթահարմանը, <<ես>>-ի առավել հստակ ձևավորմանը:

Ըստ Ա.Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան ձեռք է բերում ոչ միայն <<գրքային>> գիտելիքներ, այլև սովորում է <<կյանքի արվեստին>>: Դպրոցը պատասխանատու է երեխայի ներդաշնակ զարգացման համար և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարման համար:

Աշակերտների առաջադիմության բարձրացման համար շատ կարևոր է, թե ինչպիսի մանկավարժ է դասավանդում, ի՞նչ մեթոդներով, ի՞նչ մասնագիտական և անձնային որակներ ունի:

Համաձայն Ա.Լեոնտևի, արդյունավետ մանկավարժական շփումը նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնական գործունեությանը ստեղծագործական բնույթի հաղորդմանը, երեխայի անձի ձևավորմանը, կրթության դրական մթնոլորտի ստեղծմանը, ներխմբային գործընթացների արդյունավետ կառավարմանը, ուսումնական դժվարությունների հաղթահարմանը: Արդյունավետ շփումը օգնում է ուսուցչին և երեխային լիարժեք բացահայտել սեփական

ներաշխարհը և դրսևորել այն:

Իհարկե այս ամենը ձևակերպումներ են, որոնց կիրառելիությունը խիստ ցանկալի է, բայց անհարաժեշտ է կատարել նաև հետազոտություն՝ պարզելու համար, թե ինչքանո՞վ է հետաքրքիր անցկացվում դասը, որպեսզի չկորչի աշակերտի մոտիվացիան, քանի որ հենց մոտիվացիան էլ որակյալ կրթության հիմք է հանդիսանում:

Այս հարցի պատասխանը ստանալու համար կատարել ենք վերլուծություններ՝ հիմք ընդունելով գրականության դասաժամերը:

Այսպիսով՝ նոր մեթոդների բացակայության դեպքում աշակերտը կորցնում է հետաքրքրությունը, քանի որ գրեթե չի մասնակցում դասին, ձանձրանում է միայն լսելուց:

Այժմ կա տեղեկատվության մեծ հոսք, որը կարելի է ստանալ տարբեր ձևերով, ապա առաջանում է հաջորդ հարցը. իսկ ի՞նչ տալ աշակերտին,ինչպե՞ս տալ, որպեսզի նա հետաքրքրություն ձեռք բերի, ներառվի դասի մեջ, նրան հետաքրքրի դասը, ցանկություն ունենա սովորելու, ապահովի կրթության բարձր որակ: Իհարկե, առաջին հերթին անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդներ, առավելապես օգտվել ինտերակտիվ մեթոդներից, նոր նյութի ուսումնասիրությունը կատարի աշակերտը, բայց ուսուցիչը մնա ուղղորդողի, շտկողի դերում, ցուցաբերի բարեհամբույր վերաբերմունք, հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի կարողությունները, չտարբերակի նրանց, այլ վերաբերվի հավասարապես, նյութը հասանելի և մատչելի դարձնի բոլորին:

Թերևս աշխատանք ունի նաև աշակերտը: Ինչպես արդեն նշել ենք, դպրոցահասակ երեխան անում է այն, ինչ տեսնում է: Երեխային անհրաժեշտ է հասցնել այն գիտակցական մակարդակին, որ նա ինքը հասկանա կրթության կարևորությունը, մոտիվացիա փնտրի դպրոցում: Իսկ ահա այդ գիտակցության հասցնելու համար մեծ աշխատանք է պահանջվում, որն էլ սկսվում է հենց ուսուցչից, քանի որ որպես դասավանդող սուբյեկտ, ինքն է ապահովում դասարանի դրական մթնոլորտը, տալիս կրթության որակ:

Եվ այսպիսով գալիս ենք այն եզրահանգմանը, որ կարևոր է գնահատել աշակերտի իրական ուժերը և նրան ճիշտ ուղղորդել, լինել սրտացավ:

Ամփոփելով՝ մեջբերենք փիլիսոփա, հոգեբան Դմիտրի Ուզնաձեի խոսքերը. <<Ուսուցման մեջ կարևոր նշանակություն ունի ոչ թե այն հումքը, որը տրվում է կոնկրետ հմտության կամ կոնկրետ բովանդակություն ունեցող գիտելիքի տեսքով, այլ կարևորը ըստ սահմանված ուղղության աշակերտի ուժերի զարգացումն է>>:

Հետազոտության տվյալների վերլուծություն

Հետազոտական աշխատանքն առավել հիմնավորված դարձնելու նպատակով՝ կատարել եմ գրականության 2 դասաժամի վերլուծություն:

Առաջին դասը իրականացրել եմ 9-րդ գ դասարանում,թեման՝ Կորյուն «Վարք Մաշտոցի»: Դասն իրականացրել եմ ավանդական եղանակով՝ կիրառելով դասախոսություն մեթոդը: Այս դասի ընթացքում կատարվել է նախորդ դասի հարցում, գնահատում, որից հետո նոր դասը սկսվել է դասախոսություն մեթոդով, դասի ավարտին հանձնարարվել է տնային աշխատանք՝ պատրաստել ելույթ որևէ հեղինակի մասին և տեղեկություններ փնտրել համացանցում:

Հաջորդ դասը կրկին իրականացրել եմ 9-րդ գ դասարանում, թեման՝ Մովսես Խորենացու «Ողբ»-ը: Դասն իրականացրել եմ միևնույն դասարանում՝ նպատակ ունենալով համեմատել միևնույն կարողություն, ունակություն ունեցող սովորողին դասավանդման տարբեր մեթոդների կիրառմամբ դասաժամերի ընթացքում:Նախապես պլանավորել էի դասն իրականցնել նոր մեթոդներով և առաջնորդվել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներով, քանի որ հենց դա հնարավորություն կտար համեմատելու դասավանդման այդ երկու եղանակները, համեմատել միևնույն աշակերտների արձագանքը, դասին մասնակցության և ընկալունակության աստիճանը:

Վերլուծելով՝ պետք է նշել, որ ավանդական մեթոդով դասն իրականցնելու դեպքում ցածր է աշակերտների հետաքրքրվածության մակարդակը, մոտիվացիա չի առաջանում, իսկ ահա մյուս դեպքում աշակերտները ակտիվորեն մասնակցում էին դասին, կար բարձր հետաքրքրվածություն, նյութը ընկալեցին ամբողջությամբ: Կարևոր է նշել, որ դասարանում կա 29 աշակերտ և խիստ կարևոր է բոլորին ներգրավել: Կրթության որակի անկման պատճառներից է նաև շատ աշակերտներ ունեցող դասարանը, քանի որ քանակի պատճառով դժվար է և՛ վերահսկել կարգապահությունը, և՛ մատուցել որակյալ կրթություն: Սակայն նշենք, որ ժամանակակից մեթոդների կիրառմամբ և աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներով առաջնորդվելու դեպքում կարելի է հասնել հաջողության:

Այս վերլուծությունը խիստ իրատեսական է, քանի որ փորձարկումը

կատարվել է միևնույն դասարանում, միևնույն աշակերտների հետ, այսինքն՝ հստակ երևում է, որ դասավանդման եղանակը փոխելու դեպքում կարելի է մեծ ազդեցություն թողնել այն նույն սովորողի վրա, որը չի ցուցաբերել հետաքրքվածություն ավանդական եղանակով վարած դասի ընթացքում:

Հաճախ անհրաժեշտ է փնտրել այն, ինչը սովորողին կմոտիվացնի և կբարձրացնի ընկալունակության մակարդակը, կխթանի ավելի շատ սովորելու ցանկությանը:

Նշեմ նաև, որ աշակերտները լրացրել են հարցաթերթիկներ, որոնք ներկայացված են հավելված 1-ում, իսկ օրվա դասի պլանները՝ հավելված 2-ում:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ աշակերտների կողմից տրվել են հարցաթերթիկում եղած բոլոր հարցերի պատասխանները, որը շատ ողջունելի է:Եվ հաշվի առնելով այդ պատասխանները՝ կարելի է ասել, որ կրթության որակ ապահովելու համար պետք է աշխատել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքով, լինել չափի մեջ,սրտացավ,ապրումակցող; Չպետք է մոռանալ տարիքային ճգնաժամերի մասին, որպեսզի մոտեցումը լինի ճիշտ, քանի որ ճիշտ մոտեցման հետևանքն է որակյալ արդյունքը:

Օգտագործված գրականության ցանկ

- Է. Բեկման, Բ. Թրաֆորդ. Դպրոցների ժողովրդավարական կառավարում: Եվրոպայի խորհրդի հրատարակչություն: Ստրասբուրգ, 2007 թ.
- Ս. Խաչատրյան , Ս. Պետրոսյան և ուրիշներ . Ժողովրդավարության հիմնարար արժեքներ. Երևան, էդիթ Պրինտ, 2005թ
- https://armineab.wordpress.com/2014/04/11/
- https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Հավելված 1

Հարցաթերթիկ

(աշակերտների համար)

Հարգելի՛ աշակերտ, խնդրում եմ լրացնել հարցաթերթիկը, այն անանուն է: Շրջանակի մեջ առեք Ձեր նախընտրած պատասխանը:

1. Ի՞նչ կցանկանայիք փոխել ձեր գրականության դասաժամին: (խնդրում եմ նշել մինչև 2 տարբերակ)

ա/ դասարանային մթնոլորտը

բ/ նյութի հաղորդման ձևը

գ/դասագրքերը

դ/ գնահատման համակարգը

զ/ այլ

2.Ինչո՞ւ եք ուզում փոխել նշվածը/ նշվածները

_____

_____

3.Ունե՞ք բավական ժամանակ տնային աշխատանքի կատարման համար:

ա/ երբեք

բ/երբեմն

գ/հաճախ

դ/միշտ

4.Ձեր անձնական օրինակով, խնդրում եմ ասացեք, թե որքանով եք բավարարված հետևյալից(խնդրում եմ գնահատել 1-5 բալային համակարգով)

	Միանշանակ բավարարված չեմ	Մասամբ բավարարված չեմ	Մասամբ բավարարված եմ	Շատ բավարարված եմ
1.Գրականության				

դասաժամի ուսուցման ընդհանուր որակը				
2. Դասերը հետաքրքիր անցկացնելու ուսուցչի ունակությունը				
3.Նյութը հասկանալի և բոլորի հասանելի դարձնելու ուսուցչի ունակությունը				

5.Ունե՞ք ստորև նշվածների բավական քանակություն և որակ, որպեսզի լավ սովորեք:

	Միանշանակ ոչ	Ոչ բավական	Բավական	Միանշանակ բավական
1.Կրթական նյութեր(գիրք, տետր և այլն)				
2.Համակարգիչ				
3.Ժամանակ				

6. Երբևիցե՞ ոգեշնչվել եք ուսուցչի կողմից:

ա/ երբեք

բ/ երբեմն

գ/ հաճախ

դ/ միշտ

7.Երբևիցե՞ թևաթափ եղել եք ուսուցչի պատճառով:

ա/ երբեք

բ/ երբեմն

գ/ հաճախ

դ/ միշտ

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Հավելված 2

Օրվա դասի պլան

Դասարան՝ 9-րդ

Առարկա՝ գրականություն

Թեմա՝ Կորյուն «Վարք Մաշտոցի»

Նպատակը- Գրական բնագրեր ընթերցելու, դրանց բովանդակությունը և հիմնական միտքը ընկալելու, ոճական և լեզվական արտահայտչամիջոցները ճանաչելու և քննելու կարողության զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ-Դասագիրք, գրականության տետրեր

Դասի ընթացքը

1.Կազմակերպչական մաս

2.Անցած նյութի հարցում

3. Նոր նյութի հաղորդում

Խթանման փուլ- Տալ տեղեկություններ Կորյունի մասին՝ կիրառելով դասախոսություն մեթոդը:

Իմաստի ընկալում-Գրական բնագրի շղթայաձև ընթերցում, համեմատում:

Կշռադատում- Հատվածների ընտրություն և բովանդակության վերարտադրում:

Կատարվում է անդրադարձ հարց ու պատասխանի միջոցով:

Աշակերտները գնահատվում են և հանձնարարվում է տնային աշխատանք:

Տնային աշխատանք-Հաղորդում կամ զեկուցում հեղինակի և նրա ստեղծագործության մասին:

Օրվա դասի պլան

Դասարան-9-րդ

Թեմա՝ Մովսես Խորենացու «Ողբ»-ը

Դասի նպատակները- 1. Յուրացնել «Ողբ»-ի բովանդակությունը, հասկանալ գրելու շարժառիթը, նպատակը :

2. Կարողանալ զուգահեռներ անցկացնել Խորենացու նկարագրածի և մեր ժամանակների միջև:

3. Զարգացնել համագործակցելու հմտություններ:

4. Բնագիրը կարդալու, հասկանալու, վերլուծելու, ինքնուրույն կարծիք հայտնելու կարողություններ ձևավորել:

Անհրաժեշտ պարագաներ-Դասագիրք, գրականության տետրեր, Մ. Խորենացու «Հայոց պատմություն», պատի թերթ, սահիկաշար Մ. Խորենացու մասին:

Դասի ընթացքը

Խթանման փուլ- Խորենացի բառը մտագրոհի ենթարկել, գրի առնել բոլոր այն բառերն ու գաղափարները, որոնք կասեն աշակերտները: Այս ընթացքում ցուցադրվում է սահիկաշարը:



Իմաստի ընկալման փուլ

Դասարանը բաժանել 4 խմբի և յուրաքնչյուր խմբին տալ հանձնարարություն: Ուսուցիչը նախօրոք պետք է հոգա, որ բոլոր խմբերը ձեռքի տակ ունենան Խորենացու <<Ողբ…>>-ի բնագիրը: Հանձնարարել խմբերին կարդալ բնագիրը և կատարել խմբերի համար նախատեսված հանձնարարությունը, որի համար տալ 15 րոպե ժամանակ:

1-ին խմբին հանձնարարել <<Ողբ>>-ից դուրս գրել հայ ժողովրդի բնավորության բոլոր մերժելի, կործանարար գծերը, որոնք թվարկում է Խորենացին:

2-րդ խմբին հանձնարարել <<Ողբ>>-ից դուրս գրել այն տողերը, որոնք իրենց կարծիքով խիստ արդիական են:

3-րդ խմբին հանձնարարել <<Ողբ>>-ից դուրս գրել այն տողերը, որտեղ երևում է, թե ինչու է ողբում Խորենացին:

4-րդ խմբին հանձնարարել գրել, թե ինչպես կուզենար տեսնել իր ազգը Խորենացին:

Քննարկել յուրաքանչյուր խմբի պատասխանը:

Կշռադատման փուլ

Կիրառել <<Քառաբաժան մեթոդը>>, հանձնարարությունը կատարել խմբերով:

Ի՞նչ էիք տեսնում <<Ողբ>>-ը կարդալիս	Ի՞նչ էիք զգում <<Ողբ>>-ը կարդալիս
Ի՞նչ կապ եք տեսնում մեր այսօրվա կյանքի հետ	Նոր վերնագիր

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը պետք է կարդան իրենց գրառումները: Աշակերտները գնահատվում են և հանձնարարվում է տնային աշխատանք:

Տնային աշխատանք

1. Գրել շարադրություն <<Ինչի՞ համար է ողբում Խորենացին>> վերնագրով:
2. Խորենացու <<Ողբ>>-ից անգիր սովորել նշված հատվածները: